ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 հունիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

84
(2750)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Վ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԸ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ «ԴԱՉԱՅՈՒՄ» ՉԻ ԱՊՐՈՒՄ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը թեեւ իշխող ՔՊ-ի ձայներով ՀՀ նախագահ ընտրվեց ԱԺ-ում, այնումենայնիվ, շարունակում է Նիկոլ Փաշինյանի թիմակիցների կողմից մնալ ամենամերժված կերպարներից մեկը: Նա անգամ կառավարական ամառանոցներում առանձնատուն չունի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Վահագն Խաչատուրյանին առանձին կացարան է առաջարկվել «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի կողմից, սակայն կացարանն այնքան անբարվոք, ապրելու համար ոչ պիտանի վիճակում է եղել, որ նախագահը հրաժարվել է դրանից, չի ցանկացել ապրել կառավարական՝ իրեն հատկացված բնակարանում: Թեեւ իշխանության վերին օղակները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, խոստացել են, որ բնակարանը կարճ ժամանակում կվերանորոգվի եւ կհանձնվի նախագահին, սակայն այն մինչ օրս պատրաստ չէ, դեռ նորոգումները շարունակվում են, իսկ Վահագն Խաչատուրյանը ապրում է իր հին բնակարանում: Հիշեցնենք, որ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը ՀԱԿ անդամ էր, ով 2022թ.-ին դադարեցրել էր իր անդամակցությանը ՀԱԿ-ին՝ ՔՊ-ի կողմից առաջադրվելով ՀՀ նախագահի թեկնածու: Նա դադարել է լինել առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գաղափարակիցը, քանի որ առաջին նախագահը հրապարակավ Նիկոլ Փաշինյանին «ազգակործան պատուհաս» որակեց, իսկ Խաչատուրյանը, փաստորեն, «ազգակործան պատուհասի» հետ կիսում է պատասխանատվություն՝ մերօրյա ազգակործան քաղաքականության մասով:

ՀՅԴ գերագույն ժողովը, որը մեկնարկել էր հունիսի 9-ից, երեկ ավարտվեց. ընտրվել է ՀՅԴ գերագույն մարմնի նոր կազմ, ԳՄ ներկայացուցիչ է վերընտրվել Իշխան Սաղաթելյանը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ժողովի ընթացքում քննարկվել են կուսակցության գործունեության, ռազմավարության հետ կապված մի շարք հարցեր, ինչպես նաեւ քննարկվել են Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների առջեւ ծառացած մարտահրավերները: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՀՅԴ գերագույն ժողովից: Այսպիսով, տեղեկացանք, որ ՀՅԴ ժողովը շատ թեժ է անցել, տարաձայնություններ են եղել՝ հատկապես Իշխան Սաղաթելյանի՝ ԳՄ ներկայացուցիչ ընտրվելու հետ կապված, դաշնակցականների մի մասը դեմ է եղել նրա թեկնածությանը, դժվարությամբ են կարողացել համաձայնության գալ Սաղաթելյանի թեկնածության շուրջ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՅԴ-ական, ԱԺ պատգամավոր Քրիստինե Վարդանյանն այս առիթով ասաց. «Նախ հաստատում եմ, որ ժողովը թեժ է անցել, մեր բոլոր ժողովներն են այդպես անցնում: Հատկապես երկրում ստեղծված այս իրավիճակում չէր կարող այլ կերպ լինել, քանի որ եղել են քննարկումներ՝ ստեղծված իրավիճակի, դրանից դուրս գալու ելքերի մասին: Մեր ժողովների ժամանակ մշտապես հնչում են տարբեր կարծիքներ, որեւէ սահմանափակում չունեն այդ կարծիք հնչեցնողները, բոլոր դաշնակցականները ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը: Ինչ վերաբերում է ՀՅԴ ԳՄ նոր կազմի ընտրությանը, մենք մշտապես ընտրում ենք կազմ, իսկ եթե ԳՄ անդամներից որեւէ մեկին ժողովի մեծամասնությունը դեմ լինի, որեւէ տարբերակ չկա, որ այդ մարդն ընտրվի. մեզ մոտ իսկապես կա ներքին լայն ժողովրդավարություն, անհնար է որեւէ մեկի ընտրությունը ՀՅԴ ԳՄ կազմում, եթե դրան դեմ են կուսակցության մեծամասնությունը: Եթե ընտրվել է այս կազմը, ուրեմն մեծամասնությունը քվեարկել է այդպես. անհնար է լինի մեծ դիմադրություն մեկի մասով, եւ նա ընտրվի ՀՅԴ ԳՄ կազմում»: Այդ թվում Իշխան Սաղաթելյանի՝ ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ ընտրվելո՞ւ մասով. հետաքրքրվեցինք Վարդանյանից: «Դա բոլորին վերաբերում է, այդ թվում՝ առաջին հերթին ՀՅԴ ԳՄ ներկայացուցչի ընտրությանը»,-պարզաբանեց նա:



ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը 2022 թվականին նվիրատվություններ անելով է զբաղված եղել: Նախարարը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացրել գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի վերաբերյալ 2022 թվականի հայտարարագիրը: Հայտարարագրից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախարարը 2022 թվականի փետրվարի 15-ին Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում գտնվող իր երեք հողամասերն ու անհատական բնակելի տունը նվիրել է եղբորը՝ Վահան Սանոսյանին: Ընդ որում՝ նույն այդ հայտարարագրի համաձայն՝ նա այդ հողամասերից մեկը ձեռք էր բերել 2003 թվականին, մեկ այլ հողամաս՝ 2020 թվականին, եւ տունն ու մյուս հողամասն էլ՝ 2021 թվականին, այն էլ՝ նույն օրը՝ հունիսի 28-ին: Հայտարարագրի համաձայն՝ Գնել Սանոսյանն ապրում է Նոր Նորքում գտնվող բնակարանում, որի ձեռք բերման տարեթիվը հայտարարագրում պաշտպանված է, այսինքն՝ չի երեւում: Վերջինս ունի նաեւ 2012 թվականի արտադրության MERCEDES-BENZ մակնիշի ավտոմեքենա: Անդրադառնանք նրա եկամուտներին. նախարարը 2022 թվականին ընդհանուր ստացել է 23 մլն 342 հազար դրամ եկամուտ, որից 20 մլնը նախարարի տարեկան աշխատավարձն է, 11 հազար դրամ ստացել է «Մարտիգ» համալսարանից եւ 2 մլն դրամ էլ՝ ՊԵԿ-ից: Գնել Սանոսյանը նաեւ վարկ ունի, որի մայր գումարը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 42 մլն դրամ, որը մարելու համար այդ տարի 6 մլն դրամ է ծախսել: Ըստ հայտարարագրի՝ Գնել Սանոսյանը 2022 թվականին հանգստի է մեկնել եւ դրա համար ծախսել 2 մլն դրամից ավելի գումար, որը ներառում է տոմսն ու կեցության ծախսը. բացի այդ, 2 մլն դրամից ավելի գումար էլ նախարարի կողմից վճարվել է որպես ուսման վարձ: Եվ վերջապես՝ բանկում նախարարն ունեցել է 2 մլն 916 հազար դրամ, իսկ կանխիկ գումար՝ 150 հազար ռուբլի եւ 7 մլն 200 հազար դրամ:

Հայրենի իրավապահ համակարգը կասկածելի հանգամանքներում կոծկեց «Հայր եւ որդի Երեւաններ» ՍՊԸ-ին պատկանող «Շերեփ» ռեստորանում տեղի ունեցած միջադեպը: Բանն այն է, որ Shamshyan.com-ը մայիսի 11-ին հրապարակել էր, որ մայիսի 9-ին Երեւանի կենտրոնում հերթական անգամ կանխվել է մի խումբ անձանց միջեւ խուլիգանական դրդումներով հետագա ծեծկռտուքի միջադեպը: Ըստ կայքի՝ 16:15-ի սահմաններում պարեկները, խուլիգանություն կատարելու հիմնավոր կասկածի հիման վրա, ձերբակալել եւ Ոստիկանության կենտրոնական բաժին են տեղափոխել մի խումբ անձանց: Պարզվել է, որ Ամիրյան 1 հասցեում գործող «Շերեփ» ռեստորանային համալիրում վճարման հաշվի շուրջ վիճաբանություն էր տեղի ունեցել ռեստորանի աշխատակիցների եւ հաճախորդների միջեւ, որի ժամանակ կոպիտ կերպով խախտվել էր հասարակական կարգը, եւ փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց ու ինչեցրել հայհոյանքներ: Ոստիկանության կենտրոնական բաժին են տեղափոխվել նշված ռեստորանի տնօրեն, Երեւանի բնակիչ 35-ամյա Ստեփան Գալստյանը, Երեւանի բնակիչ 38-ամյա Ցոլակ Կարլսյանը, Վանաձոր քաղաքի բնակիչ 36-ամյա Սմբատ Ալիխանյանը, Արարատի մարզի բնակիչ 28-ամյա Ռոբերտ Փանոսյանը, որն աշխատում է նշված ռեստորանում՝ որպես մենեջեր, Կոտայքի մարզի բնակիչ 28-ամյա Արգիշտի Սիմոնյանը, որն աշխատում է նշված ռեստորանում՝ որպես մենեջեր, Գեղարքունիքի մարզի բնակիչ 35-ամյա Նարեկ Աբրոյանը, որը նշված ռեստորանի հյուրընկալն է եղել, Երեւանի բնակիչ 25-ամյա Սոկրատ Բոյաջյանը, որն աշխատում է նշված ռեստորանում՝ որպես պահեստապետ, եւ Ոստիկանություն էր հրավիրվել նաեւ Երեւանի բնակիչ 35-ամյա Օֆելյա Ալիխանյանը: Նույն դեպքի մասին ՀՀ քննչական կոմիտեի մամուլի խոսնակ Գոռ Աբրահամյանն էլ մեզ հայտնեց, որ ոստիկանությունից ստացված նյութերի ուսումնասիրության արդյունքում քրեական վարույթ նախաձեռնելու հիմքեր չեն եղել: Այսինքն՝ միջադեպը եղել է մայիսի 9-ին, դեպքի մասին լրատվամիջոցներին հայտնի է դարձել երկու օր անց, սակայն երկու օրվա ընթացքում իրավապահները պարզել են, թե հանցագործության դեպք չի գրանցվել: Ինչպես հաճախորդների կողմից, այնպես էլ ռեստորանի աշխատակիցների կողմից հանցագործության մասին հաղորդում չի ստացվել: Եւ այստեղ հարց է առաջանում՝ ինչո՞ւ նման օպերատիվությամբ քննիչները չեն քննում նմանօրինակ դեպքերը, ինչպես Երեմյաններին պատկանող ռեստորանի միջադեպն էր: Ավելին՝ մյուս դեպքերի նման օրերով մարդկանց քննչականներ տանել-բերելու փոխարեն՝ մեկ էլ հանկարծ երկու օրվա մեջ Քննչականի համար կասկածելի արագ արագության պայմաններում քննիչները հասկանում են, որ հանցագործություն չի եղել: Թե ինչի դիմաց են քննչական գործունեություն ծավալողները փրկել Երեմյաններին այս միջադեպից, դժվար է ասել, սակայն ակնհայտ է, որ գործարար Դավիթ Երեմյանը եթե իշխող ՔՊ-ի համար անցանկալի մարդ լիներ, հիմա դատարանի առաջ կանգնած կլինեին նրա աշխատակիցները, բայց նրանք ներվեցին: Մենք դեռ կհետեւենք այս պատմությանը:



ԱՐՁԱԳԱՆՔ

ԱԲՈՎՅԱՆԸ՝ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամ նախկին դատգամավոր Արման Աբովյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադարձել է Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացին, ինչպես նաեւ խաղաղության պայմանագրի կնքման հավանականությանը:

-Պարոն Աբովյան, վերջին շրջանում տեսնում ենք, որ Հայաստանն ու Ադրբեջանը պարբերաբար բանակցություններ են վարում Մոսկվայում, Վաշինգտոնում: Կողմերը թեեւ հատարարում են, որ մոտ են խաղաղության պայմանագրի կնքմանը, բայց այդ պայմանագիրը այդպես էլ գլուխ չի գալիս: Դուք ի՞նչ եք կարծում, կողմերը իսկապե՞ս մոտ են խաղաղության պայմանագրի կնքմանը, եւ ի՞նչ տարաձայնություններ կան, ինչի՞ շուրջ չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ:

-Նախ՝ իմ խորին համոզմամբ՝ դա ոչ թե Հայաստան-Ադրբեջան բանակցություններն են, այլ գերտերությունները փորձում են ձեւակերպել իրենց հետաքրքրությունները փոփոխված աշխարհաքաղաքական իրավիճակում: Ի՞նչ է սա նշանակում. ըստ էության, այսօր Հայաստանը զբաղված է փաթեթավորմամբ այն կործանարար զիջումների, որոնք ինքը իրականացնում է, եւ որոնց ինքը պատրաստ է գնալ՝ որակելով որպես խաղաղությանը միտված գործընթաց կամ տարածաշրջանային խաղաղություն: Դա քաղաքագիտական նոնսենս է, այդպիսի բան գոյություն չունի: Գոյություն ունի ընդամենը խոշոր խաղացողների շահերի սպասարկում: Տվյալ դեպքում, ըստ էության, Ադրբեջանն էլ է նույնը անում, բայց Ադրբեջանի շահերը այս պարագայում թուրք-ադրբեջանական ընդհանուր շահի տակ պետք է դիտարկենք, այսինքն՝օրինակ՝Հայաստանի Հանրապետության տարածքների բռնազավթման գործընթաց, որը շատ նրբորեն այս իշխանությունն անվանում է դեմարկացիա կամ դելիմիտացիա, կամ Հայաստանը դարձնել առաջին փուլում թուրքական աշխարհի պորտալար՝ հետագա մասնատման գործընթացը հեշտացնելու համար: Սա ադրբեջանցիներն անվանում են այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք», հայկական կողմն էլ՝ ճանապարհ: Ինչ վերաբերում է՝կողմերը մոտիկ են, թե մոտիկ չեն, պետք է, նախ, հասկանանք՝այդ կողմերը ինչ նկատի ունեն՝խաղաղության պայմանագիր ասելով: Հայաստանը հասկանում է հետեւյալը. համաձայն պաշտոնական լրահոսի՝ընդունելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, այսինքն՝զիջելով Արցախը ոչնչացման եւ լեգիտիմացնելով Հայաստանի Հանրապետության տարածքների բռնազավթումը, Հայաստանը դրա դիմաց ակնկալում է խաղաղություն, այսինքն՝ չեն կրակելու: Սա նվազագույնը քաղաքագիտական տգիտություն է, որովհետեւ Ադրբեջանի ու Թուրքիայի տեսլականը, ցավով պետք է արձանագրեմ, նաեւ խոշոր խաղացողների՝ Եվրոպայի եւ ԱՄՆ-ի տեսլականը այլ է: Իրենք ի՞նչ են տեսնում. իրենք տեսնում են հայկական հարցի իսպառ փակում, այսինքն՝ Արցախի ոչնչացում եւ Հայաստանի մասնատում, ինչը իրենք չեն էլ թաքցնում: Ինչ-որ մտորումների մեջ ընկնել պետք չէ: Իրենք ուղիղ սա հայտարարում են. եթե կան մարդիկ, ովքեր դեռեւս ապրում են թրքահաճո, ադրբեջանամետ պատրանքների մեջ, ուղղակի խորհուրդ կտամ ծանոթանալ Շուշիի հռչակագրի տեքստի հետ:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՑԱԽԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ ԿՔՐԵԱԿԱՆԱՑՎԵ՞Ն

«Հայաքվեն» առաջարկում է քրեականացնել Հայաստանի անունից Արցախն այլ պետության մաս ճանաչող ցանկացած գործողություն կամ հայտարարություն: «Հայաքվեի» նախաձեռնող խումբն երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացրեց դիմում՝նախաձեռնելով օրենսդրական նախագծի ներկայացում Ազգային ժողովին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նախաձեռնության անդամ Ավետիք Չալաբյանը մանրամասներ է ներկայացրել նախաձեռնության գործունեության վերաբերյալ. ««Հայաքվե» քաղաքացիական նախաձեռնության նպատակը՝ պաշտոնապես քրեականացնել Հայաստանի հանրապետության անունից Արցախը այլ պետություններին հանձնելու փորձը: Մեր Սահմանադրությունը, մեր Անկախության հռչակագիրը եւ 1992 թվականին Գերագույն խորհրդի կողմից ընդունված համապատասխան որոշումը արգելում է Արցախը Հայաստանի Հանրապետության անունից ճանաչել այլ պետության կազմում: Ցավոք, մենք վերջին շրջանում տեսնում ենք, որ գործող իշխանությունը փորձում է շրջանցել եւ՛ Սահմանադրության պահանջները, եւ՛ օրենքներն ու այդպիսի հայտարարություն անել: Մենք հիմա ուզում ենք մի քայլ էլ առաջ գնալ եւ պաշտոնապես քրեականացնել ՀՀ անունից այդպիսի գործողություններ անել, որպեսզի ցանկացած իշխանություն թե՛ հիմա, թե՛ ապագայում չհամարձակվի նման հայտարարություններ անել: Արցախը հայկական է, պետք է մնա հայկական եւ, ի վերջո, վերամիավորվի Հայաստանի Հանրապետությանը»:

ԲՀԿ-Ն՝ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Աշնանը Երեւանում սպասվում են ավագանու ընտրություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը ԲՀԿ կուսակցության անդամ Արման Աբովյանից հետաքրքրվել է՝ արդյոք կուսակցությունը որոշում ունի ընտրություններին մասնակցելու մասով:

-Մենք բազմաթիվ անգամ հայտարարել ենք, որ երբ ժամանակը կգա, հայտարարությունը կտարածենք: Առայժմ այսքանը: Ո՛չ ավել, ո՛չ պակաս: Մեզ համար յուրաքանչյուր գործընթաց կարեւոր է, բայց հիմա սեւեռված ենք ավելի գոյաբանական կռիվների վրա, որոնք առկա են հանրապետությունում: Ինչ վերաբերում է ընտրություններին, ժամանակը կգա, հայտարարություն կանենք:

Նյութերը՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՀԱՃՈՒՅՔՆԵՐ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ԲԿՄԱ՝ Բանակային կենտրոնական մարզական ակումբի տնօրեն Գագիկ Աղբալյանը երկու օր առաջ իր ֆեյսբուքյան էջում մի հետաքրքիր հրապարակում էր արել՝ խնդրելով օգտատերերին օգնել իրեն՝գտնելու արագ կառուցվող տնակ: Նա նաեւ լուսանկար էր տեղադրել:

Լուսանկարում հիմնականում ռոմանտիկ երեկոներ կազմակերպելու համար նախատեսված տնակ է, որտեղից էլ առաջացավ մեր հետաքրքրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը մի քանի կառուցապատողների հետ զրույցից պարզեց, որ այդ տնակները՝ամբողջությամբ կահավորված, 6-ից մինչեւ 10 միլիոն դրամ արժեն. 1 քմ-ն սկսվում է 300 հազարից մինչեւ 600 հազար դրամ եւ ավելի:



Հիշեցնենք, որ ԲԿՄԱ տնօրենը մինչեւ 2018-ի հեղափոխությունը Նիկոլ Փաշինյանի «Հայկական ժամանակ» թերթում ֆոտոլրագրող էր, միջին վիճակագրական քաղաքացի: Հիմա՝ հեղափոխությունից 5 տարի անց, նա թանկարժեք տնակներով է հետաքրքրվում, միջին վիճակագրական քաղաքացու հետաքրքրություններից վեր հաճույքների ձգտում: Ո՞ւմ հետ է պատրաստվում ռոմանտիկ երեկո անցկացնել Աղբալյանը. արդյոք ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանի համա՞ր է փնտրում թանկարժեք «վրանը», որ Տավուշի անտառներում դնեն...

ArmLur.am-ը փորձեց այս թեմայի շուրջ զրուցել նախկին գործընկերոջ հետ, սակայն Գագիկ Աղբալյանը խիստ դժկամորեն ասաց, թե ցանկություն չունի մեկնաբանելու ոչինչ: Երբ շատ համառեցինք, ասաց, թե եղբոր համար է փնտրում, ու հրաժարվեց մանրամասներ հայտնել: Նկատենք, որ ՀՖՖ պաշտոնյան հանրային հարթակում գնիջեցման, թանկի եւ էժանի խոսակցություն է վարել:

Դժվար է հավատալ, որ տնակը գնելու ցանկություն ունեցող Աղբալյանի եղբայրն իր հարազատին գործից կկտրեր եւ տնակ գտնելու գործ կհանձնարարեր: Չհավատացինք:

Բայց փաստ է, որ հեղափոխական թիմը թանկարժեք հաճույքների շրջանակն ընդլայնել է: Ծով չունենք, որ շքեղ զբոսանավեր պատվիրեն, տնակներ են պատվիրում նորահարուստ իշխանիկները, որ անտառներում հաճույքներ վայելեն:

Իսկ ի՞նչ է փոխվել ՀՀ շարքային քաղաքացու կյանքում՝ կհարցնեք դուք. ոչինչ, ուղղակի Խաչատրյան ԳԱԳԻԿԻ փոխարեն Աղբալյան Գագիկներն են հարստացել:

ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կներկայանա 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով:

«2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով քննիչ հանձնաժողովը հունիսի 20-ին՝ ժ. 10:00-ին, հրավիրել է Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ մասնակցելու քննիչ հանձնաժողովի աշխատանքներին:

Քննիչ հանձնաժողովը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանից ստացել է դրական պատասխան», - հայտնում են ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովից:

ՀՅԴ ՆՈՐ ԿԱԶՄԸ

ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի հանրային կապերի գրասենյակից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են. «2023 թ. հունիսի 9-11-ը կայացել է ՀՅԴ Հայաստանի 26-րդ գերագույն ժողովը:

Ժողովը քննել է ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի երկամյա գործունեությունը, Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում ստեղծված իրավիճակը, նախանշել առաջիկա անելիքները եւ սահմանել ՀՅԴ Հայաստանի կառույցի գործունեության ուղենիշները:

Ժողովի ավարտին ընտրվել է գերագույն մարմին հետեւյալ կազմով.

Ավետիսյան Թադեւոս
Գալստյան Լիլիթ
Գեւորգյան Արգիշտի
Հակոբյան Վարդան
Մաթիլյան Հակոբ
Մանուկյան Գեղամ
Մեղրյան Պետրոս
Սաղաթելյան Իշխան
Սարգսյան Իգոր
Սիմոնյան Աշոտ
Ստեփանյան Խաչատուր
Վարդանյան Գերասիմ
Տոնոյան Տարոն:

ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի ներկայացուցիչ է ընտրվել Իշխան Սաղաթելյանը»:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը հունիսի 12-13-ն աշխատանքային այցով գտնվում է Հնդկաստանի Պունի քաղաքում՝ մասնակցելու G20 Digital Economy Working Group-ի հանդիպման շրջանակներում անցկացվելիք «Գլոբալ թվային հանրային ենթակառուցվածք գագաթնաժողովին» (Global Digital Public Infrastructure (DPI) Summit)-ին:

ՀՀ ԲՏԱ նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ գագաթնաժողովի շրջանակներում Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության եւ Հնդկաստանի էլեկտրոնիկայի եւ տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության միջեւ ստորագրվել է «Թվային փոխակերպումների համար բնակչության մասշտաբով իրականացված հաջող թվային լուծումների փոխադարձ տրամադրման ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր:

Հուշագիրը ստորագրել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը եւ Հնդկաստանի Հանրապետության էլեկտրոնիկայի եւ տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության գլխավոր քարտուղար Ալկեշ Կուար Շարման:

Ստորագրված փաստաթղթով կողմերն արտահայտում են իրենց պատրաստակամությունը՝ ընդլայնելու համագործակցությունը երկու երկրների միջեւ ինստիտուցիոնալ համագործակցության խթանման, տեխնիկատնտեսական հիմնավորման, արդիականացման գնահատման եւ թվային փոխակերպման լուծումների իրականացման ոլորտներում:

Գագաթնաժողովին նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը հանդես է եկել ելույթի խոսքով, որում, մասնավորապես, նշել է.

«Այժմ մենք քննարկում ենք կարեւոր թվային հանրային ենթակառուցվածքները եւ դրանց կարեւորությունը այն մարդկանց համար, որոնք կիրառում են դրանք: Մենք բոլորս պատմական ժամանակաշրջանում ենք ապրում, որտեղ մասնակից ենք տեխնոլոգիաների ստեղծմանը, որոշ ժամանակ անց, միգուցե, այս տեխնոլոգիաները ինքնուրույն ստեղծեն իրենց տեխնոլոգիաները եւ սեփական լեզուն: Այստեղ են երկրներ, որոնք ունեն արհեստական բանականության ազդեցության դրական եւ բացասական փորձառություն: Եվ սա լավ առիթ է երկրների միջեւ ստեղծելու կոալիցիա՝ տեխնոլոգիաները կարգավորելու համար, եւ հարկ եմ համարում նշել, որ, այո՛, մենք ցանկանում ենք կարգավորել տեխնոլոգիաների կիրառությունը, բայց միեւնույն ժամանակ չսահմանափակել դրանց զարգացումը եւ աճը: Ես տպավորված եմ, թե ինչպես են Հնդկաստանում, կիրառելով տեխնոլոգիաները, պայքարում աղքատության դեմ եւ ապահովում որակյալ ենթակառուցվածքների հասանելիությունը: Սա լավ օրինակ է, թե ինչպես պետք է աշխատենք, եւ ինչի վրա կենտրոնանանք: Լիահույս եմ, որ միավորելով մեր ուժերը՝ կկարողանանք ստեղծել տեխնոլոգիաներ, որոնք կարող են նպաստել մարդկության կենսակերպի բարելավմանը»:

Գագաթնաժողովի շրջանակներում Գեւորգ Մանթաշյանը հանդիպումներ կունենա Հնդկաստանի պետական եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, քննարկումներ կլինեն միջոցառմանը ներկա տարբեր պետությունների մասնակիցների միջեւ:

«G20»-ում Հնդկաստանի նախագահության տարում գագաթնաժողովը մի հարկի տակ է հավաքվել G20-ի անդամներին, հրավիրված երկրների, միջազգային կազմակերպությունների հայտնի փորձագետների, քաղաքականություն մշակողների եւ պրակտիկ մասնագետների, որոնք աշխատում են թվային կառավարման ոլորտում՝ կիսելու իրենց փորձը, ինչպես նաեւ ընդունելու թվային հանրային ենթակառուցվածքը՝ համաշխարհային թվային տնտեսությունը բարելավելու համար: Այն համահունչ է G20-ի «Մեկ երկիր, մեկ ընտանիք եւ մեկ ապագա» թեմային: Գագաթնաժողովի շրջանակում տեղի կունենա նաեւ համաշխարհային թվային հանրային ենթակառուցվածքների ցուցահանդեսը, որտեղ G20-ի անդամները եւ հրավիրված երկրները կցուցադրեն իրենց բնակչության մասշտաբի թվային հանրային ենթակառուցվածքների մասին տեղեկություն:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ՝ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Եվրոպական խորհրդարանը լիագումար նիստում նախատեսում է քննարկել Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունները եւ իրավիճակը Լեռնային Ղարաբաղում ու Լաչինի միջանցքում:

Առաջիկայում կայանալիք նիստում նախատեսված են դեբատներ, այդ թվում՝ «Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունները եւ իրավիճակը Լեռնային Ղարաբաղում եւ Լաչինի միջանցքում» թեմայով, կլինեն հարցեր՝ Եվրահանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելին:

Ադրբեջանն ապօրինի կերպով անցակետ է տեղադրել Լաչինի միջանցքում՝ Հակարի կամրջի վրա: Հայաստանի եւ Արցախի արտաքին գործերի նախարարությունները հայտարարել են, որ Ադրբեջանի այդ քայլը 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության խախտում է:

ԲԵՐԵՏՆԵՐ՝ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության խաղաղապահ բրիգադում տեղի է ունեցել ատեստավորման քննությունները հանձնած եւ բրիգադում հաստիքների նշանակված «Պաշտպան հայրենյաց» ծրագրի մասնակիցներին խաղաղապահի կապույտ բերետ հանձնելու հանդիսավոր միջոցառումը:

Համաձայն ՀՀ ՊՆ-ի տարածած հաղորդագրության՝ շնորհավորելով զինծառայողներին ատեստավորման առաջին փուլը հաղթահարելու կապակցությամբ՝ Սուրեն Պապիկյանը վստահություն է հայտնել, որ ՊՆ խաղաղապահ բրիգադի շարքերը համալրած երիտասարդները պատվով են ստանձնելու իրենց ուսերին դրված պատասխանատու առաքելությունը, քանի որ ծառայելով հայոց բանակում՝ նրանք արտերկրում ներկայացնելու են Հայաստանը:

ՋՈՒ բարեփոխումների շրջանակում կարեւորելով ատեստավորման գործընթացը՝ պաշտպանության նախարարը շեշտել է, որ այն պետք է լինի շարունակական՝ դառնալով հայոց բանակի զարգացման կարեւոր խթաններից մեկը:

Սուրեն Պապիկյանը ՊՆ խաղաղապահ բրիգադում ծառայության նշանակված երիտասարդներին հանձնել է կապույտ բերետները, ինչպես նաեւ խորհրդանշական նվերով է պարգեւատրել շարքային Նվեր Չավիշյանին՝ որպես «Պաշտպան հայրենյաց» ծրագրով ատեստավորված առաջին բացարձակ գերազանցիկի:

Միջոցառումը եզրափակվել է խաղաղապահների հանդիսավոր երթով:

ԳՈՐԾԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ԴԻՐՔԻ ԿՈՐՈՒՍՏ՝ ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Մայորի եւ փոխգնդապետի անփութության հետեւանքով Հին Թաղերում հակառակորդը տիրացել է մարտական դիրքերի տեղակայման քարտեզին եւ շրջափակել այն. տեղեկությունը հաղորդում է Գլխավոր դատախազությունը՝ նշելով, որ գործն ուղարկվել է դատարան: 2023 թվականի հունիսի 2-ին ՀՀ զինվորական դատախազությունում ստացվել են իրական վարույթի նյութերը՝ ըստ մեղադրանքի՝ հրամանատար, փոխգնդապետ Ջ.Մ-ի եւ ստորաբաժանման շտաբի պետ, մայոր Վ.Ղ.-ի՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով (Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ): 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո ՀՀ ՊՆ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 120-հոգանոց անձնակազմը՝ փոխգնդապետ Ջ.Մ.-ի հրամանատարությամբ, 2020 թվականի նոյեմբերի 26-ից անցել է Պաշտպանության բանակի հրամանատարի անմիջական ենթակայության ներքո եւ մարտական հերթապահության ընդգրկվել Հին Թաղեր տեղամասի արեւելյան սահմանի 12 մարտական դիրքերում՝ ստանձնելով մարտական հերթապահություն:

Ըստ հաղորդագրության՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Ադրբեջանի ՋՈ զինծառայողները, խախտելով հրադադարի ռեժիմը, գրոհ են ձեռնարկել նշված ստորաբաժանման պահպանության տեղամասի N մարտական դիրքի վրա, որտեղ մարտական հերթապահության էր ընդգրկված նաեւ նույն ստորաբաժանման շտաբի պետ, մայոր Վ.Ղ.-ն: 40 որոպե տեւած մարտական գործողությունների արդյունքում, մայոր Վ.Ղ.-ի հրամանով եւ ղեկավարությամբ, անձնակազմը հարկադրաբար նահանջել է, ինչի հետեւանքով մարտական դիրքն անցել է հակառակորդի վերահսկողության տակ: Մայոր Վ.Ղ.-ն, պատասխանատվություն կրելով ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի պահպանման համար, նահանջի ժամանակ միջոցներ չի ձեռնարկել գումարտակի մարտական դիրքերի տեղակայման քարտեզը դուրս բերելու ուղղությամբ, ինչի արդյունքում հակառակորդը տիրացել է այդ քարտեզին եւ տեղեկացել Հին Թաղեր տեղամասի արեւելյան հատվածի բոլոր դիրքերի տեղակայման վայրերի կոորդինատներին եւ ուրվագծերին: Անձնակազմի հրամանատար, փոխգնդապետ Ջ.Մ.-ն ոչ պատշաճ է կատարել իր ծառայողական պարտականությունները:



Մասնավորապես՝ Ջ.Մ.-ն վերադաս հրամանատարությանը զեկուցել է միայն N մարտական դիրքի վրա հակառակորդի հարձակման ու դրա արդյունքում վիրավորների առկայության մասին: Բացի այդ, վերադաս հրամանատարությանը զեկուցել է իրավիճակի հանդարտեցման մասին, մինչդեռ առկա էր հակառակորդի ուժերի կուտակում: Այնուհետեւ, Ջ.Մ.-ն, տեղյակ լինելով հակառակորդի կողմից կուտակումների մասին, տեղեկացված լինելով նաեւ մեկ այլ մարտական դիրքից անձնակազմի դուրս գալու հնարավորության մասին, առանց բավարար հիմքերի, նշված դիրքի անձնակազմին հրամայել է մնալ դիրքում եւ շարունակել շրջանաձեւ պաշտպանությունը՝ հավաստիացնելով, որ կարճ ժամանակահատվածում օգնության կհասնի: Արդյունքում դեկտեմբերի 11-ին՝ ժամը 20:30-ից մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 12-ի ժամը 12:00-ն, N դիրքի անձնակազմը, հրամանատար Ջ.Մ.-ի կարգադրության համաձայն գործելու արդյունքում աստիճանաբար հայտնվել է հակառակորդի կողմից լրիվ շրջափակման մեջ եւ զրկվել շրջափակումից ժամանակին դուրս գալու հնարավորությունից: 2020 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, մյուս մարտական դիրքում ծառայություն իրականացնող զինծառայողներ Ա.Շ.-ն, Ռ.Մ.-ն, Ս.Ա.-ն, Ա.Մ.-ն, Գ.Բ.-ն, Ս.Հ.-ն, Հ.Ա.-ն, Հ.Մ.-ն եւ Գ.Ա.-ն, խոստացված օգնության բացակայության պայմաններում չունենալով այլ ելք, սեփական նախաձեռնությամբ դիրքից դուրս են եկել, հայտնվել կուտակված հակառակորդի զինված ուժերի տեսադաշտում եւ սպանվել, իսկ նույն դիրքի դիտորդներ Ա.Հ.-ն եւ Դ.Ռ.-ն այլ երթուղով գնալու ու քողարկվելու արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 13-ին գերեվարվել են հակառակորդի կողմից:

ՕՐԵՆՔ

ԻՆՔՆԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ՝ ԲԱՆՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ շուրջ 25 օր «Արթիկ» ՔԿՀ-ում հացադուլի մեջ գտնվող կալանավոր Անդրանիկ Սարգսյանը ինքնավնասման է գնացել: Վերջինիս պաշտպան Յուրա Ավայանը հայտնել է, որ կալանավորներ Դավիթ Հովսեփյանը եւ Անդրանիկ Սարգսյանը հացադուլի մեջ են:

Նրանք մեղադրվում են ավազակային հարձակում կատարելու համար այն պարագայում, երբ որեւէ ուղղակի ապացույց առկա չէ: Սույն գործը 2022թ. հունիսից գտնվում է դատարանում. արդեն 3 դատավոր է փոխվել, իսկ դատական նիստերը անընդհատ հետաձգվում են: Մայիսի 18-ին ի վերջո դատական նիստը կայացավ, սակայն դատավոր Սաթենիկ Անդրեասյանը մերժեց այլընտրանքային խափանման միջոցի միջնորդությունը այն պարագայում, երբ դատական նիստերը կայանում են լավագույն դեպքում 6 ամիսը մեկ. Անդրանիկ Սարգսյանը եւ Դավիթ Հովսեփյանը խնամքին ունեն անձինք, Անդրանիկ Սարգսյանը ունի նաեւ հաշմանդամության կարգ, իսկ Դավիթ Հովսեփյանը կամավոր մասնակցել է 44-օրյա պատերազմին ամենաթեժ հատվածներում:

Պաշտպանի խոսքով՝ քանի որ կալանքի տակ պահելու հիմքերը առկա չեն, գործով ապացույցներ առկա չեն, իսկ Շիրակի մարզի դատախազ Եդիգարյանը ունի տրամադրվածություն, անձինք հայտարարել են հացադուլ եւ պահանջում են, որպեսզի մեղադրող դատախազը փոխվի, եւ իրենց խափանման միջոց կալանքը փոխվի այլընտրանքային խափանման միջոցով՝ խնամքի տակ գտնվող անձանց հոգ տանելու նպատակով: Ըստ պաշտպանի՝ Անդրանիկն այսօր գիշեր ինքնավնասման է գնացել, ներկա պահին նրանց վիճակը վատ է, ճնշումները շատ ցածր են, անհրաժեշտության դեպքում նրանց պետք է տեղափոխել քաղաքացիական հիվանդանոց:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը դեռ մայիսի 29-ին գրել էր, որ հայրենի իշխանությունները մտափոխվել են: Հայտնել էինք, որ ներքին քննարկումներ են ունեցել հայրենի իշխանության ներկայացուցիչները ու որոշել են զիջումների գնալ ու վարորդներին վարչական պատասխանատվության չենթարկել, կարճ ասած՝ հանդուրժել այն վարորդներին, որոնք չեն կատարելու պահանջները: Մեր աղբյուրներից տեղեկացանք, որ սա արվում է նաեւ հայրենի իշխանության համար, քանի որ վերջիններս չեն էլ պատրաստվում «պլոնկա» պոկել:

Արդեն մայիսի 31-ին, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները հանդիպեցին ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանի եւ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պատկան պաշտոնյաների հետ՝ քննարկելու համար ավտոմեքենաների ապակիների թաղանթապատման եւ լուսաթափանցելիության հետ կապված հարցերը:

Հաշվի առնելով թաղանթապատված ապակիներով մեքենաների քանակը, խախտումը վերացնելու համար նախատեսված ժամանակի սղությունը, ինչպես նաեւ իրավակիրառ պրակտիկան կտրուկ փոփոխելու ոչ նպատակահարմար լինելու հանգամանքը՝ պատգամավորների կողմից ներկայացվեց առաջարկ՝ ցանկալի արդյունքին հասնել հնարավորինս նվազ վարչական ներգործության միջոցներով:

Ստացվում է, որ պարեկներն են որոշելու՝ տուգանել, թե նախազգուշացնել վարորդներին: «Ժողովուրդ» օրաթերթին, սակայն, տեղեկություններ են հասել, որ պետական գերատեսչությունների աշխատակիցներն էլեկտրոնային հասցեներին նամակներ են ստանում, որ պետք է ապակիների թաղանթազերծում անեն՝ պահպանելով լուսաթափանցելիության թույլատրելի չափերը: Այս հաղորդագրությունից թերեւս կարելի է եզրակացնել, որ իշխանությունները ավելի շատ հակված են տուգանելու տարբերակին:

Հիշեցնենք, որ ներպետական օրենսդրության իրավադրույթների եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի համաձայն՝ մեքենաների առջեւի կողային ապակիների լուսաթափանցելիությունը պետք է կազմի առնվազն 70%:

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՆՑԱՎՈՐ ԽՈՒՄԲ Է ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ա. Աղամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա տեւական ժամանակ համասեռ հանցավոր գործունեությամբ զբաղվելու՝ Երեւան քաղաքում գործող առեւտրի կենտրոններից եւ խանութ սրահներից առանձնապես խոշոր չափերի գաղտնի հափշտակություններ կատարելու դիտավորությամբ Ժորա Պողոսյանի եւ Գրիգոր Մարտիրոսյանի կողմից նախնական համաձայնությամբ 2020 թվականի հունվար ամսին ստեղծված եւ մինչ 2021 թվականի ապրիլի 13-ը ղեկավարած կայուն կազմակերպած խմբում, որի կազմում ընդգրկված են եղել նաեւ Անդրանիկ Հովհաննիսյանը, Արամ Գրիգորյանը Վազգեն Ստեփանյանը, Քրիստինե Նազարեթյանը, Մարիամ Ռաֆայելյանը, Անահիտ Գրիգորյանը, Էդուարդ Քոչարյանը, Անատոլիա Հարությունյանը, Հեղինե Աբգարյանը, Արմեն Մովսեսյանը, Նինա Հովսեփյանը, Արեւիկ Հովեյանը, Եվա Պետրոսյանը, Գեղեցիկ Մելյանը, Արման Հավհաննիսյանը, Համլետ Վանոյանը, Գեւորգ Մարտիրոսյանը, կազմակերպված խմբի ղեկավարներ Ժորա Պողոսյանի եւ Գրիգոր Մարտիրոսյանի ուղղորդմամբ կատարել է ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն: Գործը ուղարկվեց դատարան:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահները Աղունիկ Հազրյանին մեղադրանք են առաջադրել այն բանի համար, որ նա 2005 թ. հոկտեմբերի 28-ից մինչեւ 2016թ. հոկտեմբերի 8-ը ներառյալ, զբաղեցնելով Շիրակի մարզի Արեգնադեմ համայնքի ղեկավարի պաշտոնը, ՀՀ օրենքի ուժով լիազորված լինելով ներկայացնել համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, հանդիսանալով պաշտոնատար անձ, 2010թ. մինչեւ 2016թ. հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում հափշտակություն կատարելու դիտավորությամբ, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, շահադիտական նպատակներով Արեգնադեմ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների ուսման վարձավճարի փոխհատուցման քողի տակ Արեգնադեմի համայնքապետարանի բյուջեից 2012 թ. դեկտեմբերի 13-ին կատարել է 40.000 ՀՀ դրամի փոխանցում իր անվամբ «ԱՅԴԻԲԱՆԿ» ՓԲԸ միջոցով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 9-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 161 դեպք, որոնցից 34-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏՆՕՐԵՆՆԵՐԸ ԴԵՄ ԵՆ ՔՊ-ԱԿԱՆ ԴԱՌՆԱԼՈՒՆ

Տավուշի մարզպետ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահ Հայկ Ղալումյանին հարցում եմ ուղարկել, թե մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններից քանիսն են ՔՊ կուսակցության անդամ: Մարզպետը պատասխանել է, որ Տավուշի մարզի 76 հանրակրթական դպրոցների տնօրեններից ՔՊ կուսակցության անդամ է երկու տնօրեն:

ԴՐԱՄԱՀԱՎԱՔՈՒԹՅՈՒՆԻՑ «ԱՆՏԵՂՅԱԿ»

Տավուշի մարզից սոցիալապես անապահով ընտանիքների ծնողները լրագրողիս դժգոհել են, որ դպրոցական «Վերջին զանգի» կապակցությամբ հանրակրթական դպրոցներում մեծ չափերով դրամահավաքություն է եղել: Այդ փողահավաքությունը կատարվել է դպրոցների ծնողական կոմիտեների նախաձեռնությամբ, սակայն ծնողական կոմիտեները դպրոցների տնօրենությունների հետ այդ գործում ներդաշնակ են գործում: Սոցիալապես անապահով ծնողները դժգոհել են, որ «Վերջին զանգի» կապակցությամբ իրենց զավակների համար գնված շորերի փողին գումարվել են ավարտական ճոխ քեֆի, դպրոցի տնօրենի, դասարանի դասղեկի համար գնված նվերների, տեսանկարահանման, լուսանկարահանման եւ այլ ծախսերի գումարները: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե դպրոցական «Վերջին զանգի» կապակցությամբ մարզի դպրոցների շրջանավարտները միջինը ինչքան ծախս են կատարել: Մարզպետ Հայկ Ղալումյանը պատասխանել է. ««Վերջին զանգ» միջոցառման կապակցությամբ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների կատարած ծախսերը որոշում է տվյալ դպրոցի ծնողխորհուրդը»:

ԿԻՍԱՏ ԳՈՐԾՆ ԱՎԱՐՏԵՑԻՆ

Երեք տարի առաջ Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում ապրող բարեկամավանցիները գումարներ են հավաքել իրենց ծննդավայրի՝ հեռավոր, սահմանամերձ Բարեկամավան գյուղի միջնակարգ դպրոցի տանիքը վերանորոգելու համար: Այն ժամանակ Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը դպրոցի տանիքը նորոգելու համար պահանջվող գումարի չափը քիչ է նշել, այդ պատճառով ստավրոպոլցի բարեկամավանցիների հանգանակած գումարը չի հերիքել, հանրակրթական դպրոցի տանիքի նորոգումը կիսատ էր մնացել, անձրեւները լցվում էին դպրոցի շենք: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, պատասխանելով իմ լրագրողական հարցմանը, հայտնել էր, որ Բարեկամավանի դպրոցի տանիքը կընդգրկվի 2023 թվականի հրատապ ծրագրերում: Վերջին մեկուկես ամսում տեղացող անձրեւները լցվում էին դպրոցի շենքից ներս՝ վնասելով կառույցը: Բարեկամավանցիները, երեք տարի սպասելով, այդպես էլ չտեսան այդ գործում իշխանության կողմից աջակցություն. նրանք, համախմբելով իրենց ուժերը, դպրոցի տանիքի նորոգման կիսատ գործն ավարտին հասցրին՝ հարազատ գյուղի համար անշահախնդիր գործ անելով: Գործը հեշտացավ այն առումով, որ 3 տարի առաջ կատարված նորոգումից հետո շինանյութեր էին մնացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ՆԱՄԱԿԱՆԻ»

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳԻՐՔԸ՝ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ

Արամ Խաչատրյանի 120-ամյակի առթիվ կոմպոզիտորի տուն-թանգարանը, համագործակցելով տարբեր կառույցների հետ, լույս է ընծայել Արամ Խաչատրյանի «Նամականի» գրքի անգլերեն տարբերակը:

Ժողովածուն ընդգրկում է Գոհար Հարությունյանի, Մարգարիտ Հարությունյանի, Զառա Տեր-Ղազարյանի կազմած առաջին, երկրորդ եւ Մարգարիտ Ռուխկյանի, Ալինա Փահլեւանյանի կազմած երրորդ ժողովածուների նամակները: Գիրքը համալրված է կոմպոզիտորի տուն-թանգարանում հավաքված նոր նամակներով:

Գրքի շնորհանդեսին, որը տեղի ունեցավ հունիսի 12-ին՝ «Ես եվրոպացի հայ եմ» թեմայով քննարկման ընթացքում, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը հիշեցրեց՝ գրքի հայերեն եւ ռուսերեն տարբերակներն ավելի վաղ են տպագրվել: Տեսնելով գրքի նկատմամբ հետաքրքրությունը, պահանջարկը՝նախաձեռնել են անգլերեն տարբերակի հրատարակումը:

«Արամ Խաչատրյանին առաջին հերթին ճանաչում են որպես մեծ երաժշտի, սակայն շատերին է հետաքրքիր, թե նա ինչ ներաշխարհ ուներ: Ինչը, եթե ոչ անկեղծ սրտով գրված նամակները կարող են բացահայտել մարդու ներաշխարհի նրբերանգները: Ինքը՝ կոմպոզիտորը, առանձնակի նշանակություն էր տալիս նամակներին եւ յուրօրինակ խորհուրդ էր տեսնում դրանց մեջ: Խաչատրյանը կարծում էր, որ մեծ արվեստագետների նամակագրությունը կարող է հետագայում ճանաչողական մեծ արժեք ունենալ: Ըստ նրա՝ նամակներում հնարավոր է արտահայտել այնպիսի մտքեր, որոնք չեն ասվի հանպատրաստից եւ առերես: Նամակները կարող են դառնալ նույնիսկ պատմական փաստաթղթեր: Խաչատրյանը քաջ գիտակցում էր, որ իրենից հետո կհրապարակվեն իր նամակներն ու կներկայացվեն հանրությանը»,-ընդգծեց Գրիգորյանը:

Ժողովածուում ընդգրկված նամակների մեծ մասը պահպանվում է տուն-թանգարանի հավաքածուում, իսկ մի մասը՝ արխիվներում, մի մասն էլ հասցեատերերի ընտանիքների սեփականություն է: Գրիգորյանը հավելեց, որ գիրքը հրատարակելու ընթացքում նոր նամակներ են ստացել: Չի բացառում, որ մի քանի տարի անց տպագրեն գրքի համալրված տարբերակը:

Արմինե Գրիգորյանը հավաստիացրեց, որ նամակները նոր լույս են սփռում մեծ արվեստագետի կերպարի վրա եւ ընթերցվում մեծ հետաքրքրությամբ:

Գրքի հրատարակման գործում մեծ ներդրում է ունեցել Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը, որի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավար Շտեֆան Մալերիուսը հիշեցրեց՝ Խաչատրյանն ասել է, որ մնում է հայ, բայց եվրոպացի հայ, ոչ թե ասիացի:

«Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի գործադիր տնօրեն Մարտին Թովմասյանը եւս ներկա էր միջոցառմանը: Նա շեշտեց, որ իրենց առաքելությունը մեծանուն կոմպոզիտորի գործունեության հանրահռչակումն է:

Այդ նպատակով 19-րդ անգամ Երեւանում անցկացնում են Խաչատրյան միջազգային մրցույթը: «Այս տարի այն կազմակերպվել է «Դաշնամուր» մասնագիտացմամբ, եւ վաղը հայտնի կդառնան դափնեկիրներն ու մրցանակակիրները: Հիմնադրամն իրականացնում է նաեւ Խաչատրյան միջազգային փառատոնը, որը տեղի կունենա Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ: Այն տեղի կունենա 2023 թվականի վերջին»,- նշեց Թովմասյանը:

Խաչատրյանի հոբելյանին նվիրված տարվա ընթացքում թե՛ կոմպոզիտորի տուն-թանգարանը, թե՛ այլ մշակութային կառույցներ հանդես կգան նրան նվիրված համերգային ծրագրերով, ցուցահանդեսներով եւ այլ նախաձեռնություններով:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝ ԱՐՑԱԽ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ

Շաբաթ օրը Արցախի ԱՆ «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ եւ իրենց կողմից տրամադրված միկրոավտոբուսով 16 բուժառուներ եւ նրանց ուղեկցողները տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

19 բուժառուներ, որոնք պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել էին ՀՀ բուժում ստանալու համար, ուղեկցողների հետ վերադարձել են Արցախ:

«Հաշվի առնելով առողջական հիմքով տեղափոխվող անձանց մեծ քանակը՝ որոշում է կայացվել այդ օրվա տեղափոխությունն իրականացնել միկրոավտոբուսով, որի կադրերը ադրբեջանական լրատվամիջոցները տարածել են այնպիսի անկյունից, որ չերեւա Կարմիր խաչի նշանը»,- ասվում է Արցախի առողջապահության նախարարության տարածած հաղորդագրությունում:

ԱՌԱՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԻ ԱՆՑԿԱՑՎԻ

Ծանրամարտի աշխարհի 2024 թվականի առաջնությունը չի կայանա Հայաստանում: Կուբայի մայրաքաղաք Հավանայում կայացած նիստի ընթացքում Ծանրամարտի միջազգային ֆեդերացիան որոշել է, թե որ երկիրը հաջորդ տարի կհյուրընկալի աշխարհի առաջնությունը:

Առաջնությունը կկայանա Բահրեյնում: Ծանրամարտի աշխարհի առաջնությունը հյուրընկալելու հայտ էին ներկայացրել նաեւ Հայաստանն ու Ալբանիան:

Հայաստանն ընթացիկ տարում հյուրընկալել էր ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, որը Օլիմպիական խաղերի համար վարկանիշային էր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչներ «Բի էս Թի» ՍՊԸ-ի եւ «Ֆլորես աճուրդի տուն» ՍՊԸ-ի կողմից այդ թվում «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2023թ.-ի հուլիսի 03-ը, երկարաձգվում են մինչեւ 2023թ.-ի դեկտեմբերի 29-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 52-61-85 կամ այցելել բորսա՝ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00-ն:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 50 ճՏՊ. 4 մարդ զոհվել է, 76-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (3)

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Շենգավիթ վարչ. շրջան, Արշակունյաց 30 շենք, 90 հասցեում գտնվող 58,91 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 28600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Ա. Խաչատրյան փողոց, 1-ին նրբանցք, 4 շենք, 7 հասցեում գտնվող 19,8 ք.մ. ավտոտնակ եւ 0,0023 հա հողամաս, իրավունքը՝ վարձակալություն /հողամասի վարձակալության պայմանագիրը գործում է մինչեւ 01.06.2026թ./ : Լոտի մեկնարկային գինը՝ 4700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գյուղ Պտղնի, 4-րդ փողոց, 44 հասցեում գտնվող 434,6 ք.մ. բնակելի տուն, 40,4 ք.մ. ավտոտնակ, 32,4 ք.մ. մառան, 5,2 ք.մ. սանհանգույց, 2,7 ք.մ. 5,4 խ.մ. պարիսպ, 61,65 ք.մ. մակերեսով ինքնակամ շինություններ եւ 0,12 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 63200000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Նոր Հաճն, Նոր Հաճն ք., Թումանյան փողոց, 2 հասցեում գտնվող 664,3 ք.մ. հացի արտադրամաս, 313,2 ք.մ. արտադրամաս, 118.8 ք.մ. արտադրամաս, 26,4 ք.մ. պահակատուն, 10,2 ք.մ. 30,6 խ.մ. պարիսպ եւ 0,2205 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 145000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Ամիրյան փողոց, 4/4 շենք, 60 հասցեում գտնվող 152,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 150000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 29.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (1)

Գ

«ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 30.06.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2480935:

Մ Մեկնարկային գին՝ 2,008,388 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, Իյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2161076:

Մ Մեկնարկային գին՝ 1,617,868 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2626848:

Մ Մեկնարկային գին՝ 697,357 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2140468:

Մ Մեկնարկային գին՝ 585,779 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

Մ Մեկնարկային գին՝ 854,262 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

Մ Մեկնարկային գին՝ 2,580,220 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2183736:

Մ Մեկնարկային գին՝ 777,554 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

Մ Մեկնարկային գին՝ 859,492 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 24,800 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 186,004 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մ Մեկնարկային գին՝ 165,337 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 20,667 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջրադիչ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մ Մեկնարկային գին՝ 14,467 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 49,601 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 62,001 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 20,667 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒ,անող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝ 53,734 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (2)

Գ

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 26.06.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 2 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2004թ. արտադրության, 632 US 65 պետհամարանիշով, նարնջագույն, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ15M400073, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 6,318,000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 7,209,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 7,290,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝ կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 6,885,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 044200454, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԿԱՊՎԱԾ «ԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ»-Ի ՀԵՏ

«Ժողովուրդ» օրաթերթը ամիսներ առաջ գրել էր, որ Հանրային հեռուստաընկերությունը նկարահանում է մի քանի մասից բաղկացած գեղարվեստական ֆիլմ՝ «Կին նախարար» վերնագրով, որտեղ դերասան Աբել Աբելյանը մարմնավորում է վարչապետի կերպարը:

«Ժողովուրդ» օրաթերթը դերասան Աբել Աբելյանի հետ զրուցեց մարմնավորած դերի մասին: Ըստ նրա՝ յուրաքանչյուր դերասանի համար մեծ պատասխանատվություն է վարչապետի կերպարը մարմնավորելը:

«Նախագծին մասնակցելու առաջարկը ստացել եմ ընկերոջիցս եւ սիրով ընդունել եմ: Այս պահին միայն կարող եմ ասել, որ նախագծի նկարահանումներն ավարտվել են»,- նշեց նա՝ հավելելով, որ տեղյակ չէ, թե որ հեռուստաընկերությունն է նախագծի պատվիրատուն:

Հիշեցնենք, որ ֆիլմի սյուժեի հիմքում Պաշտպանության նախարարությունն է, որի միջոցով փորձում են առաջին պլան մղել կին զինվորականին եւ նրան դարձնել պաշտպանության նախարար, սակայն այդ ընթացքում հանդիպում են բազում խոչընդոտների: Հենց այս ամենի շուրջ էլ հյուսվում է ողջ ֆիլմի պատմությունը:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Հանրային հեռուստաընկերությանը նման ֆիլմի նկարահանումը պատվիրել է ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, եւ այն հավանաբար կկոչվի «Տիկին պաշտպանության նախարարը»:

Նկատենք, որ ամիսներ առաջ, երբ «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանության համար դիմել էր Հանրային հեռուստաընկերության հասարակայնության հետ կապերի ծառայություն, մեր տեղեկությունը հրապարակայնորեն հերքել էին՝ նշելով, որ Հանրային հեռուստաընկերությունը նման բովանդակությամբ ֆիլմ արտադրել եւ ցուցադրել չի պլանավորում, իսկ, ահա, այսօր ունենք բոլորովին այլ պատկեր: Ի դեպ, մեզ հայտնի դարձավ, որ ֆիլմը ցուցադրվելու է միայն առցանց տարբերակով:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԾՆՆԴՅԱՆ ՈՉ ՀԱՃԵԼԻ «ԱՆԱԿՆԿԱԼ»

Դերասանուհի Մարիամ Ալեքսանյանն օրեր առաջ տոնում էր ծննդյան 26-ամյակը: Նա ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում տեղեկացրել էր, որ իրենց տնից գողություն է արվել, եւ գրառում էր կատարել այդ մասին.

«Այ տականք, այ անասուն, այ ոչնչություն: Դու չես մարսելու իմ ամենաուրախ օրը փչացնելու համար: Ես գիտեմ, որ դու սա տեսնելու ես. դու այստեղից էլ իմացել ես, որ մենք տանը չենք: Մեր տուն մտնելդ, գողացածդ, քո արած վատությունը կանգնելու է կոկորդիդ եւ չես մարսելու: Խելոք վերադարձրո՛ւ՝ խուսափելով հետագա խնդիրներից: Ոնց էլ չլինի, մենք քեզ կգտնենք, քանի որ դու մեզ շատ մոտ ես: Մեր տան գողությունը քո ողջ կյանքի մղձավանջն է լինելու»:

Դերասանուհին ավելի ուշ անդրադարձել է իրենց տան գողությանն ու տարեդարձին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻԿՆԵՐԻՑ

Հայաստանի մարմնամարզության հավաքականի անդամները հաջող ելույթ են ունեցել Խորվաթիայում կայացած World Challenge Cup-ում:

Օսիջեկ քաղաքում կայանացած World Challenge Cup-ի հերթական փուլին Հայաստանը ներկայացրել են Արթուր Դավթյանը, Արթուր Ավետիսյանը, Արթուր Թովմասյանը, Գագիկ Խաչիկյանը եւ Մանե Պողոսյանը: Մարզիչներն էին Հայկ Նազարյանը եւ Քնարիկ Բրսոյանը: Հայաստանի մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանը մրցավարների շարքում էր:

Հայաստանի հավաքականից ոսկե մեդալներ նվաճեցին Արթուր Դավթյանը (հենացատկ), Գագիկ Խաչիկյանը (նժույգ-թափեր) եւ Արթուր Ավետիսյանը (օղակներ): Նժույգ-թափերում արծաթե մեդալ նվաճեց Արթուր Դավթյանը:

ՀԵՌԱՑԱՎ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՃԱՄԲԱՐԻՑ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Խորեն Բայրամյանը հեռացել է հավաքականի ճամբարից վնասվածքի պատճառով:

Այս մասին հայտնում է ՀՖՖ-ն: Բայրամյանը վնասվածք ստացել է հավաքի ընթացքում՝ մարզման ժամանակ: Նա արդեն իսկ հեռացել է ընտրանու ճամբարից եւ վերադարձել Դոնի Ռոստով:

Հայաստանի ֆուտբոլի ազգային ընտրանին սկսել է նախապատրաստվել Եվրոպայի առաջնության ընտրական փուլի Ուելսի եւ Լատվիայի դեմ հերթական խաղերին: Հունիսի 11-ին հավաքականին կմիանա Անդրե Չալըշըրը, հունիսի 12-ին՝ Էդուարդ Սպերցյանն ու Գեորգի Հարությունյանը: Լուկաս Սելարայանը եւ Նորբերտո Բրիասկո Բալեկյանը թիմին կմիանան Ուելսում հունիսի 14-ին:

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը սոցիալական ցանցերում գրառում է արել Չեմպիոնների լիգայի եզրափակիչում Անգլիայի չեմպիոն եւ գավաթակիր «Մանչեսթեր Սիթիին» 0:1 հաշվով պարտվելուց հետո:

«Մենք, անշուշտ, արժանի չէինք պարտության անցած գիշեր, զգացողությունները դեռ շատ դառն են: Ամեն խաղացողի մանկության երազանքն է Չեմպիոնների լիգայում հաղթելը, եւ մենք ահռելի ջանք գործադրեցինք: Շնորհակալություն բոլորիդ ձեր անվերապահ սիրո համար»,- գրել է Մխիթարյանը:

Հայաստանի հավաքականի նախկին ավագը եզրափակիչում փոխարինման էր դուրս եկել 84-րդ րոպեին՝ դառնալով Չեմպիոնների լիգայի եզրափակիչի մասնակցած առաջին հայ ֆուտբոլիստը:

● Հունիսի 14-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա Հայկ Մելիքյանի մենահամերգը: Տոմսերի արժեքը՝3000-7000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԿԱՊ

ՀԱՐՑ. Viva cell-ի բաժանորդ եմ, ինչպե՞ս կարող եմ զանգեր անել ռոմինգում գտնված ժամանակ:

Դավիթ Հակոբյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ Դուք օգտվում եք Ձեր հեռախոսից գտնվելով՝ Հայաստանից դուրս, Դուք օգտագործում եք արտասահմանյան օպերատորի ցանցի ռեսուրսները, այդ իսկ պատճառով համարահավաքման ձեւաչափը պետք է համապատասխանի տվյալ օպերատորի ցանցում գործող համարահավաքման ձեւաչափին:

Այսպես, Հայաստան ուղղված զանգը միշտ կատարվում է որպես միջազգային զանգ.

+ [երկրի կոդ] [տարածաշրջանի կամ բջջային ցանցի կոդ] [հեռախոսահամար],

օր՝ +374 93 297111 (Վիվա-ՄՏՍ-ի թեժ գիծ):

Տվյալ երկրի ներսում զանգ կատարելու համար կարող եք օգտագործել համարահավաքման ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ձեւաչափը.

[տարածաշրջանի կամ բջջային ցանցի կոդ] [հեռախոսահամար]

կամ

+ [երկրի կոդ] [տարածաշրջանի կամ բջջային ցանցի կոդ] [հեռախոսահամար]:

Viva Cell MTS Հայաստանի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ցանկացած ուղղությամբ SMS ուղարկելու համար անհրաժեշտ է հավաքել.

+ [երկրի կոդ] [բջջային ցանցի կոդ] [հեռախոսահամար],

օր՝ Վիվա-ՄՏՍ-ի 093 298888 հեռախոսահամարին SMS ուղարկելու համար անհրաժեշտ է հավաքել +374 93 298888:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ո՞ր գոտիներում կարելի է մշակել ոլոռ:

Ջեմմա Բաբայան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոլոռ կարելի է մշակել Սեւանի ավազանի, Կենտրոնական, Շիրակի, Լոռի-Փամբակի, Ապարան-Հրազդանի, հյուսիս-արեւելյան եւ Զանգեզուրի գոտիներում, ինչպես սերմ, այնպես էլ կանաչ զանգված եւ ունդեր ստանալու համար: Ոլոռը ցրտադիմացկուն է, սերմերն սկսում են ծլել 1-20 ջերմության պայմաններում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծիլերն ընդունակ են դիմանալու -8-120 սառնության պայմաններում: Ոլոռի ցանքի նորման է 1 հա-ին 1.0-1.1 մլ ծլունակ սերմ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Լոռու մարզում

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է անդրադարձել Երեւան քաղաքում տիրող իրավիճակին, երբ աղբարկղերը լիքն են, եւ շուրջ բոլորը կեղտ է: Քաղաքացիներից այս անգամ ահազանգ ենք ստացել մարզերից: Մեզ դիմած քաղաքացին բողոքում էր դեպի տուրիստական ուղղություններ գնացող ճանապարհներից: Մասնավորապես՝ զբոսաշրջային այս սեզոնին դեպի Դենդրոպարկ տանող ճանապարհին աղբ է եւ անասունների կեղտի հետքեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ
www.armlur.am
1

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10+14 +18+22
Կոտայքի լեռներ	+9+13 +18+21
Կոտայքի նախալեռներ	+15+18 +24+29
Գեղարքունիք	+10+14 +18+22
Լոռի	+11+16 +19+22
Տավուշ	+13+18 +22+25
Արագածոտնի լեռներ	+8+12 +18+21
Արագածոտնի նախալեռներ	+16+20 +24+28

Արարատ	+19+21 +28+30
Արմավիր	+17+19 +27+29
Վայոց ձորի լեռներ	+8+12 +20+23
Վայոց ձորի նախալեռներ	+19+21 +27+31
Սյունիքի հովիտներ	+18+21 +27+32
Սյունիքի նախալեռներ	+10+14 +20+24
Արցախ	+18+21 +27+31
Երեւան	+18+20 +27+29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»*: